МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

THE MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT
REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE UNIVERSITY

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian st., Yerevan, 0025, Republic of Armenia
(+374 10) 55-47-52, (+374 10) 55-46-41 (Fax), info@ysu.am, www.ysu.am

«12» փետրվար 2024թ.

«ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ԻՇԽԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ
(ՀՎՀՀ՝ 08428952,
հասցե՝ «Ք. Գավառ, Գեղեոն Միքայելյան, տուն 69»,
էլ.փոստ՝ «avgome@mail.ru»)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգելի պարոն Ավագյան,

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կողմից 2023 թվականի օգոստոսի 25-ին տեղեկագրում (www.gnumner.am) հրապարակվել է նստարանների և ճոճանակների ձեռքբերման «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/83» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ): Ի թիվս այլ մասնակիցների Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացվել նաև «ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊ ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 08428952, այսուհետ՝ Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 12-ի նիստի արձանագրության 7-րդ կետով Ընկերությունը Ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնի («նստատեղեր») մասով ճանաչվել է ընտրված մասնակից, 2023 թվականի հոկտեմբերի 3-ին ԵՊՀ և Ընկերության միջև կնքվել է «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/83-1» ծածկագրով և 2,481,600 (երկու միլիոն չորս հարյուր ութսունմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ ընդհանուր գնով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), իսկ 2023 թվականի հոկտեմբերի 23-ին արդեն ԵՊՀ և Ընկերության միջև՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը և Պայմանագրի 8.15 կետը, կնքվել է ֆինանսական միջոցների նախատեսման համաձայնագիր և հաստատվել գնման առարկայի մատակարարման վերջնաժամկետը՝ այն է ֆինանսական միջոցների հատկացման համաձայնագրի կնքման օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում (ստացվում է մինչև 2023 թվականի նոյեմբերի 22-ը ներառյալ):

Կատ․՝ Գնումների կազմակերպման վարչություն

Ընկերությունը Պայմանագրով նախատեսված գնման առարկայի մատակարարումը մինչ օրս չի իրականացրել: Կնքված Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն գնորդն իրավունք ունի «ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի», իսկ 6.6 կետի համաձայն «Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով»:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն «պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին»:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի պահանջները, ԵՊՀ-ն որոշել է պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ Ա. Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

Կատ.՝ Գնումների կազմակերպման վարչություն